# Հայերի դերը Կ. Պոլսի մշակութային կյանքում

## Գիտաժողով եւ գրքերի ցուցադրություն Գիտությունների ազգային ակադեմիայում

ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած «Հայաստանում պոլսահայ համայնքի օրեր» ծրագրի շրջանակներում, որն սկսվեց երեկ, կայացավ «Հայերի դերը Կ. Պոլսի մշակութային կյանքում» գիտաժողով եւ **Կարո Քյուրքմանի** (Ստամբուլ) գրքերի ցուցադրություն:

Բացելով հավաքը, ՀՀ ԳԱԱ նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանն** ասաց, որ ՀՀ սփյուռքի նախարարության Հայաստանում եւ սփյուռքում կազմակերպվող բազմաթիվ եւ բազմաբնույթ արարողությունները միտված են մեկ կարեւոր խնդրի՝ սերտ կապեր հաստատել հայրենիքի եւ սփյուռքի միջեւ: Ընդ որում՝ դրանք ընդգրկում են լայն բնագավառներ՝ գիտական, գիտակազմակերպչական, մշակութային, կրթական եւ այլն:

Այնուհետեւ իր թուրքերեն հրատարակությունները տեսագրությամբ ներկայացրեց Կարո Քյուրքմանը, որոնք վերաբերում են դրամագիտությանը, գեղանկարչությանը, կիրառական արվեստին եւ այլն:

Իր խոսքում ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** ընտրված թեման համարեց շատ կարեւոր եւ խոսուն. *«Երկու հազար եւ ավելի տարիներ մեր ժողովուրդն այնտեղ ապրելով, այնտեղ է կենտրոնացրել մեր ազգի ստեղծագործական միտքը, եւ Կ. Պոլիսը մեզ համար դարձել է մեր արվեստի կարեւորագույն օջախը՝ նպաստելով ոչ միայն տեղի, այլեւ ընդհանրապես հայկական մշակույթի զարգացմանը:*

*Մենք հպարտությամբ ենք խոսում Կ. Պոլսի նկարչության, քանդակագործության, ճարտարապետության, թատրոնի, երաժշտության եւ այլ ճյուղերի մասին, որոնցից շատերի հիմնադիրները մեր հայրենակիցներն են՝ հսկա անուններ ոչ միայն Կ. Պոլսի, Թուրքիայի հայկական աշխարհում, այլեւ համաշխարհային առումով»:*

Տիկին Հակոբյանը Կ. Քյուրքմանին հանձնեց սփյուռքի նախարարության բարձրագույն պարգեւը՝ ոսկե հուշամեդալը: Նա միաժամանակ ներկաներին տեղյակ պահեց, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Կ. Պոլսում հրատարակվող «Մարմարա» թերթի խմբագրապետ Ռոբեր Հատտեճյանին «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրելու մասին՝ ծննդյան 80-ամյակի եւ գրական-լրագրողական երկարամյա եւ արդյունավետ գործունեության համար:

Հայերի դերը Օսմանյան կայսրության մշակութային կյանքում» զեկուցումով հանդես եկավ պատմաբան Հասմիկ Ստեփանյանը: Լսվեցին նաեւ Սուրեն Դանիելյանի «Առարկայական խորհրդանշանապաշտություն շարժումը եւ Զարեհ Խրախունու պոեզիան», Արմեն Տեր-Ստեփանյանի «Պոլիսը հայ մատենագրության մեջ» զեկուցումները:

Եղան նաեւ այլ հաղորդումներ եւ մտքերի փոխանակություն:

Պոլսահայ համայնքի օրերի շրջանակում հանդիպումներ կկայանան նաեւ Գյումրիում եւ Վանաձորում, իսկ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կնշվի «Մարմարա» թերթի 70-ամյակը:

*Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ*

■

Սեպտեմբերի 16-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ «Պոլսահայ համայնքի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Մխիթարյան Սանուց միության «Դալար» երգի եւ պարի խմբի մամուլի ասուլիսը: Ինչպես հայտնեցին ՀՀ *սփյուռքի նախարարության մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից*, ասուլիսին մասնակցում էին «Դալար» խմբի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Ջուլիա Մութլուն, Սանուց միության անդամներ Դիանա Գամբարոյանը, Պարթեւ Գարյանը, Ժանին Փափազյանը:

Ներկաները ԶԼՄ-ների ներկայացուցիչներին ներկայացրեցին Սանուց միության, «Դալար» եւ «Մարալ» երգի ու պարի խմբերի ստեղծման պատմությունը, 18-19-րդ դարերում հին հայկական տարազների վերականգնման եւ ներկայացման գաղափարն ու իրականացումը: